		1 ամսվա, 12 պարապմունք	14 000 /տասնչորս հազար/
		3 ամսվա, 36 պարապմունք	38 000 /երեսուներեք հազար/
		6 ամսվա, 72 պարապմունք	75 000 /յոթանասուներեք հազար/
		12 ամսվա, 144 պարապմունք	140 000 /հարյուր քառասուն հազար/
		16 տարեկանից բարձր անձանց համար	
		1 ամսվա, 12 պարապմունք	18000 /տասնութ հազար/
		3 ամսվա, 36 պարապմունք	50000 /հիսուն հազար/
		6 ամսվա, 72 պարապմունք	95000 /իննսուներեք հազար/
		12 ամսվա, 144 պարապմունք	180000 /հարյուր ութսուն հազար/
		Անհատական պարապմունքների համար /2-ից 3 մարդ/	
		1 ամսվա, 12 պարապմունք	40000 /քառասուն հազար/
		Առողջական խնդիրներ ունեցող երեխաների խմբակային պարապմունքների համար	
		1 ամսվա, 12 պարապմունք	15000 /տասնհինգ հազար/
		Առողջական խնդիրներ ունեցող մեծահասակների խմբակային պարապմունքների համար	
		1 ամսվա, 12 պարապմունք	20000 /քսան հազար/
		<b>ՖԻՏՆԵՍ</b>	
		1 օրվա, 1 պարապմունք	1 000 /մեկ հազար/
1 ամսվա, 12 պարապմունք	8 000 /ութ հազար/		
3 ամսվա, 36 պարապմունք	21 000 /քսանմեկ հազար/		
6 ամսվա, 72 պարապմունք	40 000 /քառասուն հազար/		
12 ամսվա, 144 պարապմունք	80 000 /ութսուն հազար/		
14.	<p>համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կառավարված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.</p>		20 000 /քսան հազար/
15.	<p>համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով</p>		0 /զրո/



15.	<p>համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթաչափերի սահմաններում հաստատվում է համայնքի ավագանու կողմից.</p>		0 /գրո/								
16.	<p>համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար մինչև հազար դրամ փոխհատուցման վճար.</p>	<p>Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ գոհված կամ վիրավորված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց ընտանիքների համար</p>	<p>1000 /հազար/  0 /գրո/</p>								
17.	<p>համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույթաչափ փոխհատուցման գումարի չափով</p>		1500 /մեկ հազար հինգ հարյուր/								
18.	<p>Համայնքի տարածքում գտնվող անշարժ գույքի հասցեի տրամադրման համար</p>	<p>ա/ հասարակական, արտադրական շինությունների համար</p> <p>բ/ բնակելի տան և դրա սպասարկման շինությունների համար</p>	<table border="1"> <tr> <td data-bbox="1093 878 1364 1003">5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում</td> <td data-bbox="1364 878 1535 1003">10.000 /տաս հազար /</td> </tr> <tr> <td data-bbox="1093 1003 1364 1146">3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար</td> <td data-bbox="1364 1003 1535 1146">15.000 /տասնհինգ հազար/</td> </tr> <tr> <td data-bbox="1093 1146 1364 1272">5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում</td> <td data-bbox="1364 1146 1535 1272">7500 /յոթ հազար հինգ հարյուր/</td> </tr> <tr> <td data-bbox="1093 1272 1364 1361">3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար</td> <td data-bbox="1364 1272 1535 1361">10.000 /տաս հազար /</td> </tr> </table>	5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում	10.000 /տաս հազար /	3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար	15.000 /տասնհինգ հազար/	5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում	7500 /յոթ հազար հինգ հարյուր/	3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար	10.000 /տաս հազար /
5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում	10.000 /տաս հազար /										
3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար	15.000 /տասնհինգ հազար/										
5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում	7500 /յոթ հազար հինգ հարյուր/										
3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար	10.000 /տաս հազար /										
19.	<p>համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառնություններից բխող համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով</p>	<p>աշխատավայրից դուրս ամուսնության հանդիսավոր պետական գրանցում կատարելու դեպքում</p> <p>աշխատավայրից դուրս ամուսնության արտոնգրա պետական գրանցում կատարելու դեպքում</p>	<p>50 000 /հիսուն հազար/  10 000 /տաս հազար/</p>								

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ԳԱՄՊԱՐՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ՋՐԱՂԵՑՆՈՂ ԱՆՃԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ  
ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ**

**1. ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Համայնքային պաշտոն զբաղեցնող անձի և համայնքային ծառայողի վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք) սահմանում է համայնքային պաշտոն զբաղեցնող անձի և համայնքային ծառայողի (այսուհետ նաև՝ պաշտոն զբաղեցնող անձ/ծառայող) օրինակելի վարքագծի կանոնները ինչպես պաշտոնեական/ծառայողական լիազորություններն իրականացնելիս, այնպես էլ պաշտոնեական/ծառայողական լիազորություններից դուրս:

Կանոնագիրքը նպատակամղված է համայնքային ծառայության որակի բարձրացման, արդյունավետ կառավարման ապահովմանը՝ հանրային շահին լավագույնս ծառայելու և համայնքային ծառայության ոլորտում անհարկի վարչարարության, կոռուպցիայի վերացմանն աջակցելու համար:

Կանոնագրքի նպատակներն են՝

✓ կանոնակարգել պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի բարոյական և մասնագիտական վարքագիծը, ինչն ահրաժեշտ է սոցիալական և մասնագիտական կապերի հաստատման գործընթացում համայնքային հաստատության և դրա պաշտոնատար անձի/ծառայողի հեղինակության ձևավորման և այն բարձր պահելու համար.

✓ ուղղորդել պաշտոն զբաղեցնող անձին/ծառայողին՝ դրսևորելու Կանոնագրքին համապատասխան վարքագիծ.

✓ խթանել թիկական վարքագծի չափորոշիչներին հետևելը.

✓ իրազեկել հանրությանը պաշտոն զբաղեցնող անձից/ծառայողից ակնկալվող վարքագծի և այն ապահովելու համար առկա միջոցների մասին.

✓ աջակցել պաշտոն զբաղեցնող անձին/ծառայողին հանրությանը լավագույնս ծառայելու գործում.

✓ ամրապնդել հանրային վստահությունը տեղական ինքնակառավարման մարմինների/համայնքային իշխանության և համայնքային ծառայության հանդեպ:

**2. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ**

Կանոնագիրքը հասցեագրված է համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ համայնքի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն զբաղեցնող անձանց) և համայնքային ծառայողներին:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը պաշտոնում ընտրվելիս/պաշտոնի նշանակվելիս ծանոթանում է Կանոնագրքին և պարտավորվում հետևել վերջինիս, ինչն հաստատվում է պաշտոն զբաղեցնող անձի դեպքում վերջինիս կողմից ստորագրված գրավոր հայտարարությամբ, իսկ համայնքային ծառայողի դեպքում՝ իր պաշտոնի անձնագրի վերին հատվածում արտացոլված համապատասխան տողում ստորագրությամբ՝ նշելով իր անունը, հայրանունը, ազգանունը, տվյալ օրը, ամիսը, տարին:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը ձեռնարկում է Կանոնագրքի դրույթներին հետևելուն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները, մասնակցում վարքագծի բարձր չափորոշիչների արմատավորմանը՝ ինչպես անձամբ պահպանելով Կանոնագիրքը, այնպես էլ հետամուտ լինելով համայնքային պաշտոն զբաղեցնող այլ անձի/ծառայողի կողմից դրա պահպանմանը:

### **3. ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

#### **3.1. Հանրությանը ծառայելու գիտակցումը և հավատարմությունը հանրային շահին**

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը իր լիազորություններն իրականացնելիս՝

✓ հարգում է օրենքը, չի արձակում կամ կատարում ապօրինի հրամաններ, հետևում է իրավական կարգադրագրերին.

✓ դրսևորում է անձնուրացություն և առավելագույն արդյունավետություն՝ ի բարօրություն հանրության և գերծ իշխանական (վարչական) լծակները չարաշահելու գայթակղությունից.

✓ դրսևորում է արհեստավարժություն՝ շարունակաբար կատարելագործելով իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ հանրությանը մատուցվող ծառայությունների որակը բարելավելու համար, գործադրում է իր ողջ ներուժն՝ ելնելով հանրային շահից.

✓ գործում է հանրային իշխանության մարմինների որդեգրած քաղաքականությանը և ուղենիշներին, հանրային ինստիտուտների տեսլականին համահունչ՝ չհակադրվելով դրանց ու դրսևորելով հավատարմություն և հուսալիություն՝ անկախ համոզմունքից և դիրքորոշումից.

✓ առավելագույն զգայունություն է ցուցաբերում համայնքի տարբեր խմբերի (ներառյալ՝ կանանց և տղամարդկանց) առանձնահատուկ կարիքների նկատմամբ:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողն իր գործունեությամբ նպաստում է տեղական ինքնակառավարման մարմինների/համայնքային իշխանության և համայնքային ծառայության հանդեպ վստահության ամրապնդմանը, խուսափում է այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք կխաթարեն այդ վստահությունը: Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը դրսևորում է այնպիսի վարքագիծ, որը նպաստում է հանրության շրջանում տեղական ինքնակառավարման մարմինների/համայնքային իշխանության և համայնքային ծառայության ազնիվ, անկողմնակալ և արդյունավետ լինելու վերաբերյալ համոզմունքի ձևավորմանը, պահպանմանը և ամրապնդմանը:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը.

✓ խթանում է ցանկացած քայլ, որը նպաստում է իր լիազորությունների իրականացման և իր պատասխանատվության ներքո գտնվող ստորաբաժանումների գործունեության առնչությամբ թափանցիկությանը.

✓ հնարավորինս բաց է իր բոլոր որոշումների և գործողությունների առնչությամբ, հիմնավորում/պատճառաբանում է դրանք, հաշվետու է դրանց համար.

✓ որոշումների կայացման գործընթացում խթանում է մասնակցայնությունը՝ ներգրավելով քնակչության տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների.

✓ հնարավորինս աջակցում է քաղաքացիներին և կազմակերպություններին այն տեղեկատվությանը վերջիններիս հասանելիությունն ապահովելու հարցում, որը նրանք իրավունք ունեն ստանալ իրենց իրավունքներն իրացնելիս.

✓ չի թաքցնում հանրայնացման ենթակա տվյալները/տեղեկատվությունը:

#### **3.2. Բարեկրթությունը և հարգալիությունը**

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը.

✓ դրսևորում է իր պաշտոնին վայել (օրինակելի) վարքագիծ՝ բարձր պահելով իր պատիվն ու արժանապատվությունը, գերծ մնալով ցանկացած գործողությունից, որը կարող է վարկաբեկել /հեղինակազրկել տեղական ինքնակառավարման /համայնքային իշխանության և համայնքային ծառայության ինստիտուտները, նվազեցնել հանրության վստահությունը դրանց հանդեպ,

✓ հարգում է Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշմ, գինանշանը, օրհներգը) և պետական լեզուն.

✓ գերծ է մնում պաշտոն զբաղեցնող այլ անձի/ծառայողի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց.

✓ խուսափում է անհարկի խոստումներից, գիտակցում իր խոսքի արժեքն ու կարևորությունը.

✓ դրսևորում է բարեկիրթ վերաբերմունք բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում է իր լիազորություններն իրականացնելիս,

✓ բարյացկամ է, համագործակցող, ճշտապահ և հասանելի.

✓ բանավոր և գրավոր շփումներում բացառում է կոպիտ վարքագիծը, նամակագրության և հաղորդակցության մեջ հնարավորինս օգտակար է և հստակ.

✓ հարգում է իր վերադասի, անմիջական ղեկավարի, գործընկերների, ենթակաների արժանապատվությունը.

✓ հարգում է յուրաքանչյուր այլ անձի անհատականությունն ու արժանապատվությունը.

✓ հետևում է իր արտաքին տեսքի պատշաճ լինելուն՝ ի պաշտոնն հանդես գալիս:

### **3.3. Բարեխղճությունը**

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողն ի լիազորություններն իրականացնելիս գործում է ազնիվ և բարեխիղճ.

✓ ցուցաբերում է պատասխանատու վերաբերմունք իր լիազորությունների պատշաճ իրականացման նկատմամբ, դրանց իրականացման առնչությամբ հաշվետու է անմիջական ղեկավարին/վերադասին/ հանրությանը.

✓ ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցառումներն իր լիազորությունների մեջ մտնող հարցերը, անմիջական ղեկավարի/վերադասի հանձնարարականները սահմանված/ողջամիտ ժամկետում քննարկելու և դրանց լուծում տալու կամ այդ առնչությամբ լուծումներ առաջարկելու ուղղությամբ՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով այլ անձանց/մարմինների (դրանց ներկայացուցիչների) հետ.

✓ ճիշտ է պլանավորում ժամանակը, կատարում աշխատանքի համաչափ բաշխում՝ արդյունավետ իրականացնելով իր լիազորությունները:

#### **3.3.1. Պաշտոնեական/ծառայողական դիրքը չօգտագործելը**

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս անհարկի չի ընդգծում կամ օգտագործում իր պաշտոնեական/ծառայողական դիրքը: Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը.

✓ խուսափում է այնպիսի գործողություններից, որոնք դուրս են իր լիազորությունների շրջանակից.

✓ չի գործում ընդդեմ հանրային շահի կամ հանուն անձնական շահի.

✓ չի օգտագործում կամ թույլի տալիս օգտագործել իր պաշտոնի հեղինակությունն՝ ի շահ իրեն կամ այլ անձի. չի օգտագործում կամ թույլ չի տալիս օգտագործել իր անունը կամ

հեղինակությունը առևտրային գործունեությանն աջակցելուն/խթանելուն միտված գովազդային միջոցառումներում.

✓ Ազդեցություն չի գործում կամ փորձում ներազդել որևէ հանրային ինստիտուտի կամ պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի վրա՝ իր կամ իր ազգականների, ընկերների կամ իր հետ մասնավոր հարաբերությունների մեջ գտնվող այլ անձանց կամ կազմակերպությունների համար օգուտներ ստեղծելու կամ դրանց առավելություններ տրամադրելու նպատակով.

✓ Չի օգտագործում իր պաշտոնի հետ կապված որևէ հատկանիշ/իշխանական լծակ այնպիսի ձևով, որը նպատակաուղղված է ստիպել/դրդել որևէ անձի (այդ թվում՝ իր ենթակային) կամ կազմակերպության իր կամ իր ազգականների, ընկերների կամ իր հետ մասնավոր հարաբերությունների մեջ գտնվող այլ անձանց կամ կազմակերպությունների համար ստեղծել օգուտ կամ դրանց տրամադրել առավելություն. դրանց համար օգուտ ստեղծելու կամ դրանց առավելություն տրամադրելու նպատակով չի օգտագործում իր պաշտոնեական կապերը.

✓ չի օգտագործում իր պաշտոնի հետ կապված որևէ հատկանիշ/ իշխանական լծակ՝ սեռական ոտնձգություն կամ գենդերային խտրականություն («Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի 3-րդ հոդված) դրսևորելու նպատակով:

### 3.3.2. Հանրային ռեսուրսների օգտագործումը

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը հանրային ռեսուրսներն (տրանսպորտային միջոցներ, շենքեր, ապրանքներ, սարքավորումներ, տեղեկատվություն, նյութատեխնիկական, ֆինանսական և այլ ռեսուրսներ) օգտագործում է նպատակային, արդյունավետ և խնայողաբար:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը.

✓ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ տրամադրված միջոցները կամ դրանց օգտագործման արդյունքում ձեռքբերված ծառայություններն օգտագործում է պատշաճ և բացառապես նպատակային նշանակությամբ.

✓ աշխատանքային ժամերն օգտագործում է բացառապես պաշտոնեական/ծառայողական լիազորությունների իրականացման նպատակով.

✓ ձեռնարկում է պատշաճ քայլեր՝ ուղղված հանրային սեփականության /ռեսուրսների պաշտպանությանը /պահպանությանը և ոչ թույլատրելի նպատակներով դրանց օգտագործումը բացառելուն:

### 3.3.3. Պաշտոնեական/ծառայողական տեղեկատվության կառավարումը

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը պաշտոնեական/ծառայողական լիազորությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի/հասանելի դարձած տեղեկատվությունը (տվյալները) կառավարում է պատշաճ:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը.

✓ ձեռնարկում է անձնական տվյալների, ծառայողական, խորհրդապահական տեղեկատվության պաշտպանությանն ուղղված քայլեր.

✓ անձնական տվյալները, ծառայողական, խորհրդապահական տեղեկատվությունն օգտագործում է բացառապես թույլատրելի/իրավաչափ նպատակներով կամ թույլ չի տալիս դրանց օգտագործումն իր կամ այլոց անձնական/մասնավոր շահերի համար.

✓ չի հրապարակում կամ այլ կերպ մատչելի դարձնում հրապարակման ոչ ենթակա տվյալները/տեղեկատվությունը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով.

✓ սահմանափակում կամ արգելում է հասանելիությունը համապատասխան տվյալին/տեղեկատվությանը, երբ գերակա հանրային շահը ուղղակիորեն պահանջում է, որ այն չտրամադրվի/չբացահայտվի (եթե առկա է հստակ պահանջ օրենքով).

✓ չի տրամադրում չստուգված/ոչ հավաստի կամ ապակողմնորոշող տվյալներ/տեղեկատվություն.

✓ չի փորձում ստանալ այնպիսի ոչ հրապարակային տվյալ/տեղեկատվություն, որը նախատեսված չէ իր տնօրինման համար:

### **3.4. Օբյեկտիվությունը**

Պաշտոն գրաղեցնող անձը/ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս.

✓ դրսևորում է անկողմնակալություն՝ զերծմալով իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամտորեն այդպիսի տպավորություն ստեղծելուց.

✓ ձեռնպահ է մնում փաստերի կամ իրավական ակտերի այնպիսի մեկնաբանությունից, որը կարող է ակնհայտ կանխակալության տպավորություն ստեղծել.

✓ խուսափում է այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ անձնական զգացմունքներից, որոնք ողջամտորեն կարող են ընկալվել /մեկնաբանվել որպես կանխակալ վերաբերմունք, նախատրամադրվածություն կամ ոտնձգություն.

✓ դրսևորում է ոչ արտոնյալ վերաբերմունք որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի հանդեպ.

✓ գործում է ոչ կամայականորեն որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի հանդեպ.

✓ իր ենթակաների մասնագիտական աճի համար ապահովում է հավասար հնարավորություններ.

✓ ոչ խտրականորեն է վերաբերում որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից (գրավոր կամ բանավոր խոսքում ռասայական էպիտետների, էթնիկ վիրավորանքների կամ նվաստացուցիչ մականունների օգտագործումը, ընտանեկան, կանանց դեմ ուղղված բռնությունների, խտրականության դրսևորման վերաբերյալ կողմնակալություն արտահայտող կամ անքաղաքավարության տարրեր բովանդակող մեկնաբանություններ անելը, ազգային պատկանելիության մասին ոչ տեղին մեջբերումներ անելը և այլն).

✓ ենթակաների/աշխատակիցների հանդեպ դրսևորում է հավասար և արդարացի վերաբերմունք՝ առանց խտրականության, ներառյալ՝ քաղաքական հայացքների հիմքով:

Պաշտոն գրաղեցնող անձը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի իր քաղաքական գործունեությունը ազդեցություն չունենա իր անկողմնակալության վերաբերյալ հանրության շրջանում ձևավորված համոզմունքի վրա:

Ծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարելիս.

✓ Քաղաքականապես չեզոք է.

✓ չի առաջնորդվում իր քաղաքական համոզմունքներով, չի հետևում քաղաքական ցուցումների.

✓ չի մասնակցում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար միջոցների հավաքագրմանը.

✓ չի համագործակցում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ, որոնք նվիրատվություններ են կատարում հոգուտ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կամ հովանավորում են դրանց.

✓ հանրային իշխանության մարմինների/հաստատությունների տարածքում չի փակցնում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կամ դրանց ներկայացուցիչների անվանմամբ /անվամբ տարբերանշաններ կամ ցանկացած այլ նշան.

✓ խուսափում է այնպիսի գործողություններից և շփումներից, որոնք կարող են քաղաքական կողմնապահության տպավորություն ստեղծել:

#### **4. Նվերներ ընդունելու արգելքը**

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը չի ընդունում նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալիս, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ:

Նվերը ֆինանսական կամ այլ օգուտն է, այդ թվում՝ որևէ գույքային առավելությունը, հյուրասիրությունը, դրամական պարգևը, բարեհաճությունը, զեղչը, ժամանցը, վարկը, ուսուցումը, փոխադրումը, ճամփորդությունը, կացարանը, սնունդը կամ այլ միջոցներ, որոնք ունեն դրամական արժեք, ծառայությունները, իրավունքների տրամադրումը և փոխանցումը, պարտավորություններից ազատումը, իրավունքից հրաժարումը, ինչպես նաև այլ գործողություններ, որոնց արդյունքում ստեղծվում է օգուտ:

Նվերի ընդունումը չի կարող պայմանավորվել անձնական դրդապատճառներով/շարժառիթներով, եթե այն տված անձը կամ կազմակերպությունը.

➤ ակնկալում է պաշտոնական գործողություններ պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի կամ նրա մարմնի կողմից.

➤ ունի գործնական հարաբերություններ կամ այդպիսիք ծավալելու նպատակ պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի կամ այն մարմնի հետ, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում.

➤ իրականացնում է գործունեություն, որը կարգավորվում կամ վերահսկվում է պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի կամ այն մարմնի կողմից, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում.

➤ ունի շահեր, որոնց վրա կարող է ազդել պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի լիազորությունների իրականացումը կամ չիրականացումը.

➤ գտնվում է պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի ենթակայության ներքո՝ բացառությամբ հատուկ առիթներով տրվող խորհրդանշական նվերների:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը.

✓ Կառավարության սահմանած կարգով հայտնում է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված թույլատրելի նվերների ստացման մասին.

✓ ստացված՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված թույլատրելի նվերի արժեքը այդ օրենքով սահմանված գումարը գերազանցելու դեպքում Կառավարության սահմանած կարգով այն հանձնում է համայնքին.

✓ պահպանում է պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի՝ նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Համայնքային ծառայության մասին» օրենք իրրոյթները:

Եթե հնարավոր չէ ինքնուրույն որոշել՝ արդյոք նվերի ընդունմամբ խախտվում է դրա ընդունման օրենսդրական արգելքը, ապա պաշտոն զբաղեցնող անձն այդ հարցով խորհրդատվություն ստանալու նպատակով դիմում է իր վերադասին/անմիջական ղեկավարին, իսկ ծառայողը՝ համայնքապետարանի բարեվարչության հարցերով կազմակերպչին: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձն այդ հարցով մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով կարող է գրավոր դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

## 5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ

### 5.1 Շահերի բախման իրավիճակ

Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել: Փոխկապակցված անձանց շրջանակը սահմանված է «Հանրային ծառայության մասին» օրենքով:

Շահերի բախում առկա չէ, եթե անձնական շահը պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի լիազորությունների պատշաճ իրականացման վրա ունի թվացյալ ազդեցություն, որը փաստացի թացակայում է:

Անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

- իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

- իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության կամ իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

- իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը/առաջխաղացմանը:

Սույն Կանոնագրի իմաստով՝ անձնական շահերով առաջնորդվելը ենթադրում է նաև ցանկացած օգուտ/առավելություն պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի կամ նրա ընտանիքի կամ նրա մերձավոր ազգականների կամ նրա ընկերների կամ այն անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը գտնվում կամ գտնվել է անձնական, գործնական կամ քաղաքական հարաբերությունների մեջ, ներառյալ՝ ցանկացած պարտավորությունը: Առավելությունը ներառում է ոչ միայն առաջարկվող կամ տրվող առավելությունը, այլև որևէ պարտավորությունից խուսափելը/ազատելը:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը չի առաջնորդվում անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը.

- ✓ պահպանում է պաշտոն զբաղեցնող անձի/ծառայողի՝ շահերի բախման վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» օրենքի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի և սույն Կանոնագրի դրույթները.

- ✓ դրսևորում է զգոնություն՝ շահերի բախման իրավիճակի մասին տեղեկանալու հարցում.

- ✓ թույլ չի տալիս շահագրգիռ անձանց ազդել իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա.

- ✓ խուսափում է շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնում շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց.

- ✓ իր վերադասին կամ անմիջական ղեկավարին ներկայացնում է գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, եթե իր կողմից կամ իր մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ



որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման (այն ենթակա է ցննարկման անհապաղ):

✓ նախքան իր վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը ստանալը ձեռնպահ է մնում հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց: Վերադասը կամ անմիջական ղեկավարը ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու այլ անձի, եթե դա օրենքով արգելված չէ:

Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը կարող է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

✓ էթիկայի/վարքագծի հարցերով լիազոր մարմնին հաղորդում է տեղեկություններ պաշտոն զբաղեցնող այլ անձի/ծառայողի ներգրավվածությամբ իրեն հայտնի շահերի բախման իրավիճակների մասին:

Համայնքի ավագանու անդամը չի մասնակցում ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) կամ խնամիությամբ (ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր) կապված անձանց շահերին:

Ծառայողը շահերի բախման հարցով մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով դիմում է համայնքապետարանի բարեվարքության հարցերով կազմակերպչին:

Պաշտոն զբաղեցնող անձը/ծառայողը չի կարող.

✓ իր անձնական շահերին առնչվող հարցերով իրականացնել տեսչական կամ վերահսկողական գործառույթներ:

✓ օգտագործել իր, համայնքային հաստատության կարգավիճակը՝ իր անձնական շահերին առնչվող ակտերի մշակմանը, դրանց ընդունմանը կամ որևէ գործողության իրականացմանը մասնակցող պաշտոն զբաղեցնող այլ անձանց կամ ծառայողների վրա ազդեցություն գործելու նպատակով:

✓ իր անձնական շահերին առնչվող հարցերի առնչությամբ հանդես գալ որպես համայնքի ներկայացուցիչ:

✓ լինել երրորդ անձանց ներկայացուցիչ, խորհրդատու, գործակալ այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկվում է իր կողմից:

✓ հանդիսանալ համայնքային գնումների պայմանագրի կողմ (անձամբ կամ միջորդավորված՝ կազմակերպությունների միջոցով) այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, սույն սահմանափակումը կիրառելի է նաև նրա հետ մերձավոր ազգակցությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) անձանց նկատմամբ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30**

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 17  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և 102-րդ հոդվածի 4-րդ մասով, առաջևորդվելով 12.08.2013թ. թիվ 42-Ն «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-01-2013 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի «Վաղարշապատ համայնքի եկթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաներին տրվող սննդի անվանացանկը և օրական նորմաները հաստատելու մասին» թիվ 17 որոշմամբ հաստատված հավելվածներում կատարել փոփոխություն՝

1) Հավելված մեկի «9-10.5 ժամ» բաժնի փոխարեն կարդալ «8 ժամ», 1-ին կետի «Հաց ցորենի 150» բաժնի փոխարեն կարդալ «Հաց ցորենի 120-150», 25-րդ կետի «Դրոժ» բաժնի փոխարեն կարդալ «Խմորիչ» բաժնի:

2) Հավելված երկուսի «9-10.5 ժամ» բաժնի փոխարեն կարդալ «10.8 ժամ», 1-ի կետի «Հաց ցորենի 180» բաժնի փոխարեն կարդալ «Հաց ցորենի 120-180», 25-րդ կետի «Դրոժ» բաժնի փոխարեն կարդալ «Խմորիչ» բաժնի:


2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Ղեմ	Զեռնայած	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Ղեմ	Զեռնայած
1.	Դիանա Գառպարյան		_____	_____	13.	Հրայրա Ավետիսյան		_____	_____
2.	Արսեն Պետրոսյան		_____	_____	14.	Աննա Կիրակոսյան		_____	_____
3.	Էդվարդ Ափոյան		_____	_____	15.	Սեակ Խաչատրյան		_____	_____
4.	Նաիրա Բասենցյան		_____	_____	16.	Վահրամ Ղարիբջանյան		_____	_____
5.	Արամայիս Միրզոյան		_____	_____	17.	Կարեն Գևորգյան		_____	_____
6.	Գևորգ Ղազարյան		_____	_____	18.	Էմմա Պատուրյան		_____	_____

7. Աղդանիկ Կարապետյան \_\_\_\_\_  
8. Ներսես Մելիքյան \_\_\_\_\_  
9. Վարդան Գրիգորյան \_\_\_\_\_  
10. Կարեն Մովսիսյան \_\_\_\_\_  
11. Գոհար Նիկողոսյան \_\_\_\_\_  
12. Վահան Հախվերդյան \_\_\_\_\_

19. Էդգար Թամազյան \_\_\_\_\_  
20. Արմեն Դավթյան \_\_\_\_\_  
21. Քրիստինե Հակոբյան \_\_\_\_\_  
22. Ռուբիկ Ենոքյան \_\_\_\_\_  
23. Կարինե Միրալեյան \_\_\_\_\_

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՄՂԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1  
Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Վաղարշապատ համայնքի ավագանու  
2021 թվականի դեկտեմբերի 24-ի  
արտահերթ թիվ 2 նիստի թիվ 17 որոշմամբ  
Փոփոխությունը հաստատված է  
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Վաղարշապատ համայնքի ավագանու  
2022 թվականի հունվարի 18-ի

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ**  
**ԹԻՎ 5, ԹԻՎ 10, ԹԻՎ 11, ԹԻՎ 13, ԹԻՎ 14, ԹԻՎ 15, ԹԻՎ 18**  
**ՆԱԽԱՊԻՐՈՑՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԵՄԱՆԵՐԻ**  
**ՄԱՆԻ ԿՈՐՄԱՆԵՐԸ**  
**/1 երեխայի համար գրամներով/**

N	ԸՔերք	Երեխաների տարիքը
		/3-8 տարեկան/
		Հիմնարկում երեխաների մնալու սեռաչափային
		8 ժամ
1	Հաց ցորենի	120-150
2	Ալյուր ցորենի	30
3	Ալյուր կարտոֆիլի	3
4	Չավար, լոբազգի, սպիտակաձավար, մսոտախաձամառի մասեղեն	50
5	Մակարոնեղեն	30
6	Կարտոֆիլ	200
7	Տարբեր բանջարեղեն	325
8	Թարմ միրգ (խնձոր, դեղձ, ծիրան, բանան, մանտառեն)	150
9	Չամիչ	11
10	Հրուշակեղեն	20
11	Ջեմ	10
12	Շաքար	50
13	Կարագ	25
14	Բուսական յուղ	11
15	Չու /հատ/	1
16	Կաթ	250
17	Կաթնաշառ	40
18	Միս տավարի	94
19	Միս հավի	94
20	Թրվապեղ	11
21	Պանիր /շաքարը 2 անգամ/	10
22	Թեյ /շաքարը 2 անգամ/	0.02
23	Կակաո /շաքարը 1 անգամ/	0.06
24	Աղ յոդազված	6
25	Խմորիչ	0.5
26	Մանուկ	150

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԳԱՄՊԱՐՑԱՆ



**ՀԱՎԵԼՎԱԾ 2**  
**Հաստատված է**  
**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի**  
**Վաղարշապատ համայնքի ավագանու**  
**2021 թվականի դեկտեմբերի 24-ի**  
**արտահերթ թիվ 2 նիստի թիվ 17 որոշմամբ**  
**Փոփոխությունը հաստատված է**  
**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի**  
**Վաղարշապատ համայնքի ավագանու**  
**2022 թվականի հունվարի 18-ի**  
**արտահերթ թիվ 3 նիստի թիվ 30 որոշմամբ**

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 6**  
**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**  
**ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՆԱԴԻՆՈՐՄԱՆԵՐԸ**

/1 երեխայի համար գրամներով/

N	Մթերք	Երեխաների տարիքը
		/3-6 տարեկան/ Հիմնարկում երեխաների մեալու տեղությունը
		10,8 ժամ
1	Հաց ցորենի	120-180
2	Ալյուր ցորենի	30
3	Ալյուր կարտոֆիլի	3
4	Զավար, լոբազգի, սպիտակաձավար, վարսակաձավարի փաթեյներ	60
5	Մակարոնեղեն	40
6	Կարտոֆիլ	230
7	Տարբեր բանջարեղեն	325
8	Թարմ միրգ /խնձոր, դեղձ, ծիրան, բանան, մանդարին/	160
9	Զամիչ	11
10	Հրուշակեղեն	20
11	Ձիմ	10
12	Շաքար	50
13	Կարագ	26
14	Բուսական յուղ	11
15	Զու՛ խոտ	1
16	Կաթ	250
17	Կաթնաշոռ	40
18	Միս տավարի	94
19	Միս հավի	94
20	Թթվասեր	11
21	Պանիր /շաքարը 2 անգամ/	10
22	Թեյ /շաքարը 2 անգամ/	0.02
23	Կակաո /շաքարը 1 անգամ/	0.06
24	Աղ յոդացված	6
25	Խնձրիչ	0.5
26	Մածուկ	180

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Դ Կ Ա Ս Պ Ա Ր Ց Ա Ն



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՍԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31**

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

**ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային մարմնի պետ Կարեն Թորոսյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը (ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային մարմնի) գործունեություն ծավալելու նպատակով ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը վարձակալության իրավունքով, 2 /երկու/ տարի ժամկետով տրամադրել II.4/12 /16.8քմ մակերես/ համարակալումով ոչ բնակելի տարածքը, որը գտնվում է Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոցի Յ հասցեում՝ Վաղարշապատի համայնքապետարանի վարչական 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում:

2. Տարածքի ամսական վարձավճարի չափը յուրաքանչյուր քառակուսի մետրի համար սահմանել 700 /յոթ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Վաղարշապատ համայնքի ղեկավարին առաջարկել մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության (ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային մարմնի) հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ը/Ը Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ը/Ը Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան		_____	_____	13. Հրայր Ավետիսյան		_____	_____
2. Արսեն Պետրոսյան		_____	_____	14. Աննա Կիրակոսյան		_____	_____
3. Էդվարդ Ափոյան		_____	_____	15. Սեակ Խաչատրյան		_____	_____

- |                        |                    |                        |                    |
|------------------------|--------------------|------------------------|--------------------|
| 4. Նաիրա Բասենցյան     | <i>[Signature]</i> | 16. Վահրամ Ղարիբջանյան | <i>[Signature]</i> |
| 5. Արամայիս Միրզոյան   | <i>[Signature]</i> | 17. Կարեն Գևորգյան     | <i>[Signature]</i> |
| 6. Գևորգ Ղազարյան      | <i>[Signature]</i> | 18. Էմմա Պատուրյան     | <i>[Signature]</i> |
| 7. Անդրանիկ Կարապետյան | <i>[Signature]</i> | 19. Էդգար Թամազյան     | <i>[Signature]</i> |
| 8. Ներսես Մելիքյան     | <i>[Signature]</i> | 20. Արմեն Դավթյան      | <i>[Signature]</i> |
| 9. Վարդան Գրիգորյան    | <i>[Signature]</i> | 21. Քրիստինե Հակոբյան  | <i>[Signature]</i> |
| 10. Կարեն Մովսիսյան    | <i>[Signature]</i> | 22. Ռուբիկ Ենոբյան     | <i>[Signature]</i> |
| 11. Գոհար Աիկողոսյան   | <i>[Signature]</i> | 23. Կարինե Միրալեյան   | <i>[Signature]</i> |
| 12. Վահան Հախավերդյան  | <i>[Signature]</i> |                        |                    |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՊՐՈԲԱԹԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ ք. Էջմիածին, Կամոյի 15

Հեռ. 023147455

Ծլթի թիվ Ե/Պ-11 36

«12» ..... 2021

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏԻԿԻՆ ԴԻԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գասպարյան

Խնդրում եմ Ձեզ ՀՀ ԱՆ ՊԾ Արմավիրի մարզային մարմնին վարձակալական հիմունքներով տրամադրել ք. Էջմիածին Մաշտոց 0 շենք հասցեում գտնվող Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքի 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում գտվող թիվ 2.4/12 (16,8 քմ) աշխատասենյակները՝ Պրոբացիայի ծառայությանը օրենքով վերապահված լիազորություններն իրականացնելու նպատակով:

Հարգանքով՝

Պետ

Կարեն Թորոսյան

Կատարող՝ ՀՀ ԱՆ ՊԾ

Արմավիրի մարզային մարմնի

Ավագ մասնագետ Ս. Ատեփանյան

Հեռ. 094-74-94-66,

077-88-79-95



# ՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Էջմիածին համայնք

ԱՆՈՒՆ. ազգային (անխմբով)

Արձավիդ

Սահ

Էջմիածին

Համայնք


Մ.Ապաշտոց 0

Հայր

Մասշտաբ 1:200

① 4 հարկ 2-րդ  
 մասնաշենք

H=3.1  
 h=2.9  
 D=0.6  
 d=0.2-0.6



2-րդ մաս 4-հարկ





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐԵԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 32**

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐԵԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՏԱԵՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՄԱշՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը  
**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 1-ին նստաշրջանի 1-ին նիստի գումարման օր սահմանել՝ 2022 թվականի փետրվարի 8-ին, ժամը 15:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Ղեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Ղեմ	Ձեռնպահ
1.	Դիանա Գասպարյան		_____	_____	13.	Հրաչյա Ավետիսյան		_____	_____
2.	Արսեն Պետրոսյան		_____	_____	14.	Աննա Կիրակոսյան		_____	_____
3.	Էդվարդ Ափոյան		_____	_____	15.	Սեակ Խաչատրյան		_____	_____
4.	Նաիրա Բասենցյան		_____	_____	16.	Վահրամ Ղարիբջանյան		_____	_____
5.	Արամայիս Միրզոյան		_____	_____	17.	Կարեն Գևորգյան		_____	_____
6.	Գևորգ Ղազարյան		_____	_____	18.	Էմմա Պատուրյան		_____	_____
7.	Ատրանիկ Կարապետյան		_____	_____	19.	Էդգար Թամազյան		_____	_____
8.	Ներսես Մելիքյան		_____	_____	20.	Արմեն Դավթյան		_____	_____
9.	Վարդան Գրիգորյան		_____	_____	21.	Քրիստինե Հակոբյան		_____	_____
10.	Կարեն Մովսիսյան		_____	_____	22.	Իուրիկ Նեոբյան		_____	_____
11.	Գոհար Նիկողոսյան		_____	_____	23.	Կոստինե Մխրթանյան		_____	_____
12.	Վահան Հախվերդյան		_____	_____					

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՄ**

Ոսկեհատ համայնքի բյուջեով 2021թ. նախատեսվել են եկամուտներ 106380.2 հազ. դրամ, նույն թվում դոտացիա հանրապետական բյուջեից 65576.5 հազ. դրամ:

Բյուջեի եկամուտների փաստացի մուտքը կազմել է 114270.4 հազ. դրամ (107.4%), այդ թվում վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ 124.3%: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 57810.7 հազ. դրամ:

Ոսկեհատ համայնքի բյուջեի 2021թ. տարեկան եկամուտների պլան-կատարողականը, ինչպես նաև 2020թ. տարեկան փաստացի կատարողականը ունի հետևյալ տեսքը.

հազ. դրամ

Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2021թ. Պլան տարեկան	2021թ. Կատարող.	2021թ. Կատ.%	2020թ. կատ.	2021/2020 նկատմ.
1	Հարկային եկամուտներ ընդամենը, որից՝	23631,5	24361,7	103,1%	20241,3	120,4%
7-1	Գույքահարկ շինություններից	1415,0	910,6	64,4%	559,5	162,8%
7-2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	13616,5	14842,9	109,0%	11873,7	125,0%
9-1-2	Հողի հարկ	8600,0	8608,2	100,1%	7808,1	110,2%
45	Տեղական տուրքեր ընդամենը	290,0	551,6	190,2%	405,0	136,2%
45-6	Հիմնական և ոչ հիմնական շին. ներսում ոգելից խմ. վաճ. համար	30,0		0,0%	50,0	0,0%
45-10	Հեղուկ վառելիքի և սեղմված գազի վաճառքի թույլ.	200,0	210,0	105,0%	200,0	105,0%
45-32	Հիմնական շինությունների շինարարութ. թույլտվության համար	60,0	341,6	569,3%	155,0	220,4%
4	Ոչ հարկային եկամուտներ, որից՝	3480,0	9151,5	263,0%	999,2	915,9%
22-50	Գյուղ. նշան. հողերի վարձավճար	90,0	128,8	143,1%	110,0	117,1%
46	Տեղական վճարներ ընդամենը	3390,0	1624,0	47,9%	79,8	2035,1%
	ա/ բնակ. սպասարկման և աղբի վարձ բնակչությունից	1790,0	114,0	6,4%	79,8	142,9%
	բ / մ ան կ ա պ ա ռ տ ե գ ի ծ ն ո ղ . մ ի ջ ո ճ	1600,0	1510,0	94,4%		
28-60	Ինքնակամ շինությունների օրինականացման վճար		7398,7		809,4	914,1%
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	27401,5	34064,8	124,3%	21645,5	157,4%
37-1	Դոտացիա	65576,5	65576,5	100,0%	57654,4	113,7%
37-3	Այլ դոտացիա				1331,6	0,0%
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	92978,0	99641,3	107,2%	80631,5	123,6%
29-50	Հողի օտարումից մուտքեր		1299,0		1199,5	108,3%

38-1	Պաշտոնական կապիտալ տրանսֆերտ	13402,2	13330,1	99,5%		
	Վարչական բյուջեի տարեսկզբի մնացի տեղափոխում ֆոնդային բյուջե	35958,5	35958,5	100,0%	24570,9	146,3%
	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	13402,2	14629,1	109,2%	1199,5	1219,6%
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ	106380,2	114270,4	107,4%	81831,0	139,6%
	Ն/Թ ՍԵՓԱԿԱՆ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ	27401,5	35363,8	129,1%	22845,0	154,8%

Ոսկեհատ համայնքի բյուջեի 2021թ. սեփական եկամուտների գծով նախատեսված 27401.5 հազ. դրամի դիմաց մուտք է եղել 35363.8 հազ դրամ (129.1%):

2021թ. Ոսկեհատ համայնքի բյուջեից ծախս է կատարվել 82984.9 հազ. դրամ:

Ըստ բնագավառների կատարվել են ծախսեր.

1. Համայնքապետարանի պահպանման ծախսեր - 39981.5 հազ. դրամ
2. Կրթության համակարգի ծախսեր- 10570.0 հազ. դրամ
3. Մշակույթի համակարգի ծախսեր - 6918.9 հազ. դրամ
4. Գյուղատնտեսական ծախսեր - 570.4 հազ. դրամ
5. Աղբահանություն- 2200.0 հազ. դրամ
6. Սոցիալական ֆոնդի ծախսեր- 2340.0 հազ. դրամ
7. Համաքաղաքային միջոցառումների ծախսեր- 1494.2 հազ. դրամ
8. Ֆոնդային բյուջեի միջոցներից ծախսվել է- 18909.9 հազ. դրամ

2021թ. համայնքապետարանի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից մուտք է եղել 1510.0 հազ. դրամ եկամուտ:

Տրվել է մանկապարտեզ ՀՈԱԿ-ին սուբսիդիա - 10570.0 հազ. դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ոսկեհատ համայնքի բյուջեի ծախսերի պլան կատարողականի վերաբերյալ 01.01.2022թ. դրությամբ

հազ. դրամ

	հոդված	Քաղ. ապ. և ծիջ.		Գյուղատնտեսություն		Արհեստանոց		Այլուստ		Կրթություն		Մշակույթ		ընդամենը	
		այլ	կատ.	այլ	կատ.	այլ	կատ.	այլ	կատ.	այլ	կատ.	այլ	կատ.	այլ	կատ.
աշխատ	4111	33900.0	31985.5	700.0	570.4							12800.0	6918.9	47400.0	39474.8
էներգետ. ծառ.	4212	8000.0	3043.4											8000.0	3043.4
զրամատ. և զրահեռ.	4213					3000.0	2200.0							3000.0	2200.0
հեռ. տեղեքս. ֆաքս	4214	250.0	115.3											250.0	115.3
ապահովագր. ծախսեր	4215	50.0												50.0	0.0
նեքին գործուղ.	4221	800.0	718.2											800.0	718.2
համակարգչ. ծառ.	4232	300.0	220.8											300.0	220.8
ՁԱՄ. տեղեկ. ծառ.	4234	300.0	53.3											300.0	53.3
ներկյաց. ծախս. նվեր	4237	2200.0	403.4											2200.0	403.4
ընդ. բնույ. այլ. ծառ.	4239	2000.0	867.5	500.0				500.0						3000.0	867.5
գրասեն. պիտույք.	4261	700.0	452.1											700.0	452.1
բենզին և ցազ	4264	1000.0	400.0											1000.0	400.0
սուբսիդիա	4511									15000.0	10570.0			15000.0	10570.0
այլ. ընթ. դրամաման.	4637	3000.0	1640.0											3000.0	1640.0
ՊՆԱ հատվ. ՄԻՆ և կիր.	4624	200.0	50.0											200.0	50.0
Նվիրատու. Շահ. չհ. Կազմ.	4819	100.0	32.0											100.0	32.0
Ընդ. քաղաք. ընթաց.		52800.0	39981.5											52800.0	39981.5
համաքաղաքային	4239	3000.0	1494.2											3000.0	1494.2
սոց. ֆ.	4729	4000.0	2340.0											4000.0	2340.0
քաղաքացի. պաշտպ.	4841	500.0												500.0	0.0
պահուստ. ֆոնդ	4891	178.0												178.0	0.0
Կ. բյուջ. ընդ.		60478.0	43815.7	1200.0	570.4	3000.0	2200.0	500.0	0.0	15000.0	10570.0	12800.0	6918.9	92978.0	64075.0
Ֆ. բյուջ. ընդ.		71494.9	18909.9	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	71494.9	18909.9
ԵՆՆ և շին. կատուցում	5112	44712.2	15931.3											44712.2	15931.3
չենթ. շին. կապ. նորոգ.	5113	1000.0	980.0											1000.0	980.0
տրանս. սարքավոր.	5121	12000.0												12000.0	0.0
վարչական սարքավ.	5122	11282.7	678.6											11282.7	678.6
նախագծահետ.	5134	2500.0	1320.0											2500.0	1320.0
ԸՆԴԱՄԱՆՆԵ		131972.9	62725.6	1200.0	570.4	3000.0	2200.0	500.0	0.0	15000.0	10570.0	12800.0	6918.9	164472.9	82984.9

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԳ ԳԵՂԱՄԻԱՆ





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24**

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Էջմիածին համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 22-ի «Էջմիածին համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ չափորոշիչները սահմանելու և Էջմիածին համայնքի ավագանու 12.10.2017թ. արտահերթ թիվ 8 նիստի թիվ 72 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 38 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Դիանա Գասպարյան		_____	_____	13.	Հրայր Ավետիսյան		_____	_____
2.	Արսեն Պետրոսյան		_____	_____	14.	Աննա Գիրակոսյան		_____	_____
3.	Էդվարդ Ափոյան		_____	_____	15.	Սևակ Խաչատրյան		_____	_____
4.	Նաիրա Բասենցյան		_____	_____	16.	Վահրամ Ղարիբջանյան		_____	_____

5. Արամայիս Միրզոյան

*[Handwritten signature]*

6. Գևորգ Ղազարյան

*[Handwritten signature]*

7. Անդրանիկ Կարապետյան

*[Handwritten signature]*

8. Ներսես Մելիքյան

*[Handwritten signature]*

9. Վարդան Գրիգորյան

*[Handwritten signature]*

10. Կարեն Մովսիսյան

*[Handwritten signature]*

11. Գոհար Նիկողոսյան

*[Handwritten signature]*

12. Վահան Հախվերդյան

*[Handwritten signature]*

17. Կարեն Գևորգյան

*[Handwritten signature]*

18. Նորայր Օհանյան

*[Handwritten signature]*

19. Էմմա Պատուրյան

*[Handwritten signature]*

20. Էդգար Թամազյան

*[Handwritten signature]*

21. Արմեն Դավթյան

*[Handwritten signature]*

22. Քրիստինե Հակոբյան

*[Handwritten signature]*

23. Ռուբիկ Ենոբյան

*[Handwritten signature]*

24. Կարինե Միրայելյան

*[Handwritten signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ

ԿԱՐԳ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒՄՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ  
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՄԱՀՄԱՆՈՂ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի (այսուհետ՝ համայնք) կամավոր խնդիրների, դրանց լուծմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և դրանց իրականացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

1) համայնքի սոցիալապես խոցելի բնակչության սոցիալական և առողջական խնդիրները լուծելու համար օգնության տրամադրման կազմակերպումը.

2) ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք 22 ՊՆ տեղեկանք/, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը.

3) համայնքում մշակույթի և արվեստի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների աջակցությունը.

4) համայնքում երիտասարդության դերի բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների աջակցությունը.

5) համայնքում սպորտի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների աջակցությունը.

6) համայնքում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանն ինտեգրմանն ուղղված նախաձեռնությունների աջակցությունը.

7) համայնքում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացմանն ուղղված նախաձեռնությունների աջակցությունը.

8) բարձրագույն և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես խոցելի ընտանիքների, ինչպես նաև սոցիալապես ոչ խոցելի ընտանիքների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը.

9) համայնքի տարածքում գործող սոցիալական-հասարակական /բարեգործական/ կազմակերպությաններին օգնության ցուցաբերումը.

10) համայնքի միջնակարգ, հիմնական և ավագ դպրոցներում սովորող աշակերտներին ուսումնական տարվա ընթացքում, ըստ անհրաժեշտության, օգնության ցուցաբերումը:

3. Սույն կարգում թվարկված կամավոր խնդիրները սպառիչ չեն:

4. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

1) միջոցներ են ձեռնարկում համայնքի սոցիալապես խոցելի բնակչության սոցիալական և առողջական խնդիրները լուծելու համար օգնության տրամադրման ուղղությամբ.

2) ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք 22 ՊՆ տեղեկանք/, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանն ուղղությամբ.

3) աջակցում են համայնքում մշակույթի և արվեստի զարգացմանն ուղղված նախաձեռնություններին.

4) աջակցում են համայնքում երիտասարդության դերի բարձրացմանն ուղղված նախաձեռնություններին.

5) աջակցում են համայնքում սպորտի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների զարգացմանը.

6) աջակցում են համայնքում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանն ինտեգրմանն ուղղված նախաձեռնություններին.

7) աջակցում են համայնքում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացմանն ուղղված նախաձեռնություններին.

9) աջակցություն են ցուցաբերում բարձրագույն և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես խոցելի ընտանիքների, ինչպես նաև սոցիալապես ոչ խոցելի ընտանիքների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձի վճարման կազմակերպմանը.



9) աջակցություն են ցուցաբերում համայնքի տարածքում գործող սոցիալական-հասարակական /բարեգործական/ կազմակերպություններին և հիմնարկներին իրենց գործնության իրականացման մեջ:

4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ անկանխիկ եղանակով, համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման հետևյալ չափորոշիչներով.

1) համայնքի սոցիալապես խոցելի բնակչության սոցիալական և առողջական խնդիրները լուծելու համար յուրաքանչյուր անձին՝ մինչև 150 000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում.

2) ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների երեխաներին տրամադրել համայնքապետարանի ենթակայության տակ գործող ուսումնական/կրթական/ հիմնարկներում ուսման վարձի արտոնություն՝ ըստ համայնքի ավագանու առանձին անհատական ակտով հաստատված չափի.

3) աջակցություն համայնքում մշակույթի և արվեստի զարգացմանն ուղղված նախաձեռնություններին՝ դրանց կարևորության աստիճանից կախված մասնակի կամ ամբողջական փոխհատուցում տրամադրելու միջոցով.

4) աջակցություն համայնքում երիտասարդության դերի բարձրացմանն ուղղված նախաձեռնություններին՝ դրանց կարևորության աստիճանից կախված մասնակի կամ ամբողջական փոխհատուցում տրամադրելու միջոցով.

5) աջակցություն համայնքում սպորտի զարգացմանն ուղղված նախաձեռնություններին՝ դրանց կարևորության աստիճանից կախված մասնակի կամ ամբողջական փոխհատուցում տրամադրելու միջոցով.

5.1) սպորտի բնագավառում Եվրոպայի և աշխարհի առաջնություններում 1-ին մրցանակային տեղ գրավելու համար՝ 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ, 2-րդ մրցանակային տեղ գրավելու համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ և 3-րդ մրցանակային տեղ գրավելու համար՝ 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ, հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում.

5.2) սպորտի բնագավառում Եվրոպայի և աշխարհի առաջնություններում 1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր գրաված մարզիկների մարզիկներին՝ մարզիկներին տրվող գումարի 50 տոկոսի չափով, եթե մարզչական գործունեությունը ծավալվում է Վաղարշապատ համայնքում.

5.3) սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության մեծահասակների առաջնություններում 1-ին տեղը գրավելու համար՝ մինչև 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ, հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում.

6) աջակցություն համայնքում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացմանն ուղղված նախաձեռնություններին՝ դրանց կարևորության աստիճանից կախված մասնակի կամ ամբողջական փոխհատուցում տրամադրելու միջոցով.

7) բարձրագույն և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես խոցելի ընտանիքների, ինչպես նաև սոցիալապես ոչ խոցելի ընտանիքների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացում յուրաքանչյուր անձի դեպքում՝ ոչ ավելի քան տարեկան ուսման վարձի մինչև 50%-ի չափով, բայց ոչ ավել քան 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ, հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում.

8) համայնքի տարածքում գործող սոցիալական-հասարակական /բարեգործական/ կազմակերպություններին օգնության ցուցաբերում, հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում.

9) համայնքի Մասունցի Դավթի թաղամասում և Գարեգին Նժդեհի փողոցում բնակվող դպրոցական երեխաներին անվճար տեղափոխում ավտոբուսով դպրոց և հակառակ ուղղությամբ.

9.1) համայնքի միջնակարգ և հիմնական դպրոցներում սովորող՝ սոցիալապես խոցելի ընտանիքների աշակերտներին ուսումնական տարվան ընդառաջ /1 սեպտեմբերի/ դպրոցական պարագաներ ձեռք բերելու նպատակով դրամական միջոցների հատկացում յուրաքանչյուր երեխայի համար՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

6. Այն դեպքերում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական և գույքային միջոցների հատկացում, համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

7. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, խմբակցությունները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

8. Նախաձեռնողը համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը և ներկայացնելով առաջարկության անհրաժեշտությունը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 8-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնելու դեպքում 10 /տաս/ օրվա ընթացքում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի անհրաժեշտ չափը և սույն կարգով նախատեսված չափորոշիչների հետ համապատասխանության դեպքում միանձնյա կայացնում է նախաձեռնությունն ընդունելու կամ մերժելու մասին որոշում, այդ մասին տեղեկացնելով նախաձեռնողին:

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, դրա փաստական և իրավական հիմքերը:

10. Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները, կարող է նույն դիմումը ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

11. Համայնքի ավագանին սույն կարգի 10-րդ կետով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում՝ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում՝ մերժելու պատճառները, դրա փաստական և իրավական հիմքերը:

12. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումների ուսումնասիրությունից հետո համայնքապետարանի համապատասխան բաժնի կամ աշխատակցի կողմից տրվում է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն՝ նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:

13. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

1) համայնքի բնակիչ հանդիսանալը:

2) սոցիալապես խոցելի ընտանիք հանդիսանալու վերաբերյալ համայնքապետարանի համապատասխան բաժնի կամ աշխատակցի կողմից սոցիալական օգնության տրամադրման դրական եզրակացությունը:


3) համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի հետ համատեղ տնտեսություն չվարելը:

14. Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել առավելագույնը 1 /մեկ/ անգամ: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարին, ավագանու անդամներին կամ նրանց մերձավոր ազգականներին:

15. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում են միայն ավագանու որոշմամբ:

16. Իրականացված կամավոր խնդիրների վերաբերյալ հաշվետվությունը երկու ամիսը մեկ անգամ ներկայացվում է համայնքի ավագանուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25**

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,  
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 11.01.2022թ-ի թիվ 01/10.1/00146-2022 գրությունը և ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի գրությունը՝  
**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների նոր անվանացանկը հաստատելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատ համայնքի ավագանու 24.12.2021 թվականի «Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 10 որոշումը:

2/2 Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	2/2 Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան		_____	_____	13. Հրայր Ավետիսյան		_____	_____
2. Արսեն Պետրոսյան		_____	_____	14. Աննա Գիրակոսյան		_____	_____
3. Էդվարդ Ափոյան		_____	_____	15. Սևակ Խաչատրյան		_____	_____
4. Նաիրա Բասենցյան		_____	_____	16. Վահրամ Ղարիբջանյան		_____	_____
5. Արամայիս Միրզոյան		_____	_____	17. Կարեն Գևորգյան		_____	_____

6. Գևորգ Նազարյան

7. Անդրանիկ Կարապետյան

8. Ներսես Մելիքյան

9. Վարդան Գրիգորյան

10. Կարեն Մովսիսյան

11. Գոհար Նիկողոսյան

12. Վահան Հախվերդյան

18. Էմմա Պատուրյան

19. Էդգար Թամազյան

20. Արմեն Դավթյան

21. Քրիստինե Հակոբյան

22. Ռուբիկ Ենոբյան

23. Կարինե Միրայելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1  
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի  
Վաղարշապատ համայնքի  
Ավագանու 18.01.2022թ.  
Արտահերթ թիվ 3 նիստի թիվ 25 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Աշխատակազմի քարտուղար

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քաղաքաշինության և հողաշինության բաժին
2. Ֆինանսատնտեսագիտական բաժին
3. Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
4. Իրավաբանական բաժին
5. Կրթության և մշակույթի բաժին
6. Քարտուղարության բաժին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը 95

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

2/2	Հաստիքը	Միավոր	Դրույքաչափ	Աշխատավարձի ֆունդ
<b>Քաղաքական և հայեցողական պաշտոններ</b>				
1	Համայնքի ղեկավար	1	470 000	470000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	360000	360000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	360000	360000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	2	300000	600000
5	Համայնքի ղեկավարի օգնական	2	300000	600000
6	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	276000	276000
<b>Ընդամենը</b>		<b>8</b>		<b>2,666,000</b>
<b>Համայնքային վարչական պաշտոններ</b>				
1	Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավար	1	280000	280000
<b>Ընդամենը</b>		<b>1</b>		<b>280,000</b>
<b>Համայնքային ծառայության պաշտոններ</b>				
<b>Աշխատակազմ</b>				
1	Աշխատակազմի քարտուղար	1	360000	360000
2	Գլխավոր մասնագետ	2	200000	400000
3	Գլխավոր մասնագետ-տնտեսական ծրագրերի պատասխանատու	1	200000	200000
4	Առաջատար մասնագետ	2	150000	300000
<b>Ընդամենը</b>		<b>6</b>		<b>1,260,000</b>
<b>Քաղաքաշինության և հողաշինության բաժին</b>				
1	Բաժնի պետ	1	310000	310000
2	Բաժնի պետի տեղակալ	1	250000	250000
3	Գլխավոր մասնագետ	1	200000	200000
4	Առաջատար մասնագետ	1	150000	150000
5	1-ին կարգի մասնագետ	3	134000	402000
6	2-րդ կարգի մասնագետ	3	120000	360000
<b>Ընդամենը</b>		<b>10</b>		<b>1,672,000</b>
<b>Ֆինանսատնտեսագիտական բաժին</b>				
1	Բաժնի պետ	1	310000	310000
2	Բաժնի պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ	1	250000	250000
3	Առաջատար մասնագետ	2	150000	300000
4	1-ին կարգի մասնագետ	4	134000	536000
<b>Ընդամենը</b>		<b>8</b>		<b>1,396,000</b>
<b>Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին</b>				
1	Բաժնի պետ	1	310000	310000
2	Բաժնի պետի տեղակալ	1	250000	250000
3	Առաջատար մասնագետ	1	150000	150000
4	1-ին կարգի մասնագետ	9	134000	1206000
<b>Ընդամենը</b>		<b>12</b>		<b>1,916,000</b>
<b>Իրավաբանական բաժին</b>				
1	Բաժնի պետ	1	310000	310000
2	Բաժնի պետի տեղակալ	1	250000	250000
3	Գլխավոր մասնագետ(պատվիրակված լիազորություններ հրահանագնող)	1	186583	186583
4	Գլխավոր մասնագետ	1	200000	200000
5	Առաջատար մասնագետ (պատվիրակված լիազորություններ հրահանագնող)	2	156583	313166
6	Առաջատար մասնագետ	2	150000	300000

7	1-ին կարգի մասնագետ	3	134000	402000
Ընդամենը		11		1,961,749
<b>Կրթության և մշակույթի բաժին</b>				
1	Բաժնի պետ	1	310000	310000
2	Գլխավոր մասնագետ	1	200000	200000
3	Առաջատար մասնագետ	2	150000	300000
4	1-ին կարգի մասնագետ	2	134000	268000
5	2-րդ կարգի մասնագետ	1	120000	120000
Ընդամենը		7		1,198,000
<b>Քարտուղարության բաժին</b>				
1	Բաժնի պետ	1	310000	310000
2	Առաջատար մասնագետ (Ոսկեհատ բնակավայրի օպերատոր)	1	150000	150000
3	Առաջատար մասնագետ	1	150000	150000
4	1-ին կարգի մասնագետ	3	134000	402000
5	2-րդ կարգի մասնագետ	1	120000	120000
Ընդամենը		7		1,132,000
<b>Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ</b>				
1	Տեխնիկական սպասարկման պատասխանատու	1	276000	276000
2	Փորձագետ	1	138000	138000
3	Փորձագետ	1	120000	120000
4	Գործավար	4	100000	400000
5	Օպերատոր-նկարահանող մասնագետ	1	150000	150000
6	Օպերատոր- մոնտաժի մասնագետ	1	150000	150000
7	Վարորդ	1	98000	98000
8	Մանտեխնիկ-հյուսն	1	160000	160000
9	Էլեկտրիկ	1	160000	160000
10	Տնտեսավար	1	160000	160000
11	Հավաքարար	9	89000	801000
12	Բանվոր	1	100000	100000
13	Պահակ	2	89000	178000
Ընդամենը		25		2,891,000
Ընդամենը		95		16,372,749

1974 թվականի հունվարի մեկից հետո ծնված և նվազագույն աշխատավարձ ստացող աշխատակիցների պարտադիր սոցիալական վճարի գումարը փոխհատուցելու նպատակով փոխհատուցման գումարի չափով նախատեսվում է հավելավճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի «Վաղարշապատի համայնքապետարանի նոր աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման և որոշմամբ հաստատված թիվ 1 և 2 հավելվածները կազմվելիս առաջին հերթին հիմքում դրվել է Հայաստանի Հանրապետություն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման» մեթոդական ուղեցույցը, Վաղարշապատ համայնքի կազմավորումը՝ Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերով, Էջմիածին համայնքի և Ոսկեհատ համայնքի աշխատակազմերի գործունեության դադարեցումը և նոր աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի հիմնումը, ինչը բերում է նոր պաշտոնների և հաստիքների /համայնքային ծառայողների հաստիքների/ ձևավորմանը, բնակավայրի վարչական ղեկավարի և բնակավայրի օպերատորի հաստիքների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի ձևավորմանը՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացման, ինչպես նաև քաղաքական, վարչական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց և համայնքային ծառայողների լիազորությունների կատարման համար անհրաժեշտ սպասարկում իրականացնելու նպատակով:

Բոլոր ներկայացված պաշտոնները սահմանվել են ելներով համայնքում կատարվելիք աշխատանքների ծավալից, առանձնահատկություններից և տեսակից, ինչպես նաև ելնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ.ԳԱՄՊԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԶՊԵՏ

«11» 01 2022թ.

N 01/10.1/00146-2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷԶՄՏԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ ՏԻԿ.ԻՆԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գասպարյան,

Հայտնում եմ, որ Ձեր՝ 28.12.2021 թվականի թիվ 130 գրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ուղարկված տեղեկատվությունը համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված համայնքապետարանի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության մեթոդական ուղեցույցի պահանջներին, որը Ձեզ է ուղարկվել ՀՀ Արմավիրի մազպետի 21.12.2021 թվականի թիվ 01/10.1/07817-2021 գրությամբ:

Առաջարկվում է 3-օրյա ժամկետում համայնքապետարանի կառուցվածքի, հաստիքացուցակի, աշխատակիցների թվաքանակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել մեթոդական ուղեցույցում նշված ձևաչափին համապատասխան:

Առդիր էլեկտրոնային նյութ:

11.01.2022

X *Edvard*

VERIFIED OCSP 11.01.2022 11:06:09 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՐԳԱՆՔԱՎՈՐՈՒՄԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՄԻ ԿԱՐԳԱՆՔԱՎՈՐՈՒՄԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

Կատարող՝ Տեղական ինքնակառավարման և  
հանրապետական գործադիր մարմինների հարցերով  
վարչության տեղական ինքնակառավարման և  
համայնքային ծառայության բաժնի գլխավոր մասնագետ  
Արշակ Ղորղանյան  
Հեռ.՝ 093637656

X *Edvard*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾ ՔՆԵՐԻՆ ԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետությանիր, Կառավարական տուն 3

“.....” ..... 2022թ.

N.....

«Արմավիրի մարզպետ  
Է. Հովհաննիսյանին»

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան

Խնդրում ենք ապահովել էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի համապատասխանեցումը «Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման» մեթոդական ուղեցույցով սահմանված դրույթներին՝ ներկայացնելով անհրաժեշտ հիմնավորումներով լրամշակված և ամբողջական փաթեթ:

Աողիր՝ էլձնյութ:

10.01.2022

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ.Սանոսյան



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26**

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 11  
ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի «Բարեկարգում» տնօրինության տնօրենի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի «Վաղարշապատ համայնքի ենթակայության տակ գտնվող կառույցների 2022թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 11 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխություններ և լրացումներ՝

- 1) Աշխատակիցների քանակը կետում «64» քանակի փոխարեն կարդալ «68» քանակը:
- 2) ««Բարեկարգում և կանաչապատում» տեղամաս» մասի 4-րդ կետում գրված «Բանվոր» հաստիքի «4» միավորի փոխարեն կարդալ «8» միավորը և «552 000» աշխատավարձի ֆոնդը փոփոխել կարդալ «1 104 000» աշխատավարձի ֆոնդը.
- 3) ««Բարեկարգում և կանաչապատում» տեղամաս» մասի ընդամենը տողում գրված «49» միավորի փոխարեն կարդալ «53», «5,797,900» թվերի փոխարեն կարդալ «6,349, 900» թվերը
- 4) ընդամենը տողում գրված «64» միավորի փոխարեն կարդալ «68», «7,968,900» թվերի փոխարեն կարդալ «8,520,900» թվերը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2/2 Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	2/2 Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան		_____	_____	13. Հրայր Ավետիսյան		_____	_____
2. Արսեն Պետրոսյան		_____	_____	14. Աննա Կիրակոսյան		_____	_____

3. Էդվարդ Ափոյան  \_\_\_\_\_

4. Նաիրա Բասենցյան  \_\_\_\_\_

5. Արամայիս Միրզոյան  \_\_\_\_\_

6. Գևորգ Ղազարյան  \_\_\_\_\_

7. Անդրանիկ Կարապետյան  \_\_\_\_\_

8. Ներսես Մելիքյան  \_\_\_\_\_


9. Վարդան Գրիգորյան  \_\_\_\_\_

10. Կարեն Մովսիսյան  \_\_\_\_\_

11. Գոհար Նիկողոսյան  \_\_\_\_\_

12. Վահան Հախվերդյան  \_\_\_\_\_

15. Սևակ Խաչատրյան  \_\_\_\_\_


16. Վահրամ Ղարիբջանյան  \_\_\_\_\_


17. Կարեն Գևորգյան  \_\_\_\_\_

18. Էմմա Պատուրյան  \_\_\_\_\_

19. Էդգար Թամազյան  \_\_\_\_\_

20. Արմեն Դավթյան  \_\_\_\_\_

21. Քրիստինե Հակոբյան  \_\_\_\_\_

22. Ռուբիկ Ենոքյան  \_\_\_\_\_

23. Կարինե Միքայելյան  \_\_\_\_\_

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ

Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի  
Վաղարշապատ համայնքի  
Ավագանու 24.12.2021թ.  
արտահերթ թիվ 2 նիստի թիվ 11 որոշմամբ  
Փոփոխությունը հաստատված է  
ՀՀ Արմավիրի մարզի  
Վաղարշապատ համայնքի  
Ավագանու 18.01.2022թ.  
արտահերթ թիվ 3 նիստի թիվ 26 որոշմամբ

2022թ. համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Վաղարշապատ համայնքի «Բարեկարգում» տնօրինության  
աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային  
դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը 68

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքը	Միավոր	Դրույքաչափ	Աշխատավարձի ֆունդ
1	Տնօրեն	1	284000	284000
2	Տնօրենի տեղակալ	1	220000	220000
3	Գլխ. հաշվապահ	1	160000	160000
4	Առաջատար մասնագետ	1	105000	105000
<b>Ընդամենը</b>		<b>4</b>		<b>769,000</b>
<b>«Բարեկարգում և կանաչապատում» տեղամաս</b>				
1	Պետ	1	220000	220000
2	Պետի տեղակալ	1	212000	212000
3	Տեսուչ /պայմանագրային/	1	102000	102000
4	Բանվոր	8	138000	1104000
5	Զոդող	1	116000	116000
6	Բանվոր-ներկարար	1	112500	112500
7	Էլեկտրիկ	1	89000	89000
8	հյուսն	1	89000	89000
9	Գյուղատնտես	1	152400	152400
10	Վարորդ	1	114000	114000
11	Բանվորներ /9 ամիս/	16	138000	2208000
12	Զրվոր /9 ամիս/	2	89000	178000
13	Զրբաժան /9 ամիս/	6	89000	534000
14	Այգիների հսկիչ /9 ամիս/	8	89000	712000
15	Այգու հավաքարար	3	89000	267000
16	Վարորդ ինքնաթափի	1	140000	140000
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>53</b>		<b>6,349,900</b>
<b>«Լուսավորություն» տեղամաս</b>				
1	Պետ	1	220000	220,000
2	Պետի տեղակալ	1	150000	150,000
3	Ճարտարապետ-էլեկտրիկ	1	114000	114,000
4	Արտաքին-լուսավորության էլեկտրիկ	1	114000	114,000
5	Ամբարձիչի վարորդ	2	114000	228,000
		<b>6</b>		<b>826,000</b>
<b>«Գերեզմանատուն» տեղամաս</b>				
1	Պետ	1	220000	220,000
2	Պահակ	4	89000	356000
<b>Ընդամենը</b>		<b>5</b>		<b>576,000</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>68</b>		<b>8,520,900</b>

1974 թվականի հունվարի մեկից հետո ծնված և նվազագույն աշխատավարձ  
ստացող աշխատակիցների պարտադիր մրցիչական վճարի գումարը  
փոխհատուցելու նպատակով փոխհատուցման գումարի չափով  
նախատեսվում է հավելավճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ  
«Բ Ա Ր Ե Կ Ա Ր Գ ՈՒ Մ»  
ՏՐՈՒՆՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
АРМАВИРСКИЙ МАРЗ  
ДИРЕКЦИЯ  
"Б А Р Е К А Р Г У М"  
МЭРИИ ГОРОДА  
ВАГАРШАПАТ

ՀՀ, 1101, ք.էջմիածին, Մք. Մ. Մաշտոցի 0  
Հեռ. +374 (231) 53663 - 112

РА. 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0  
Тел.: +374 (231) 53663 - 112

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, "BAREKARGUM" DIRECTORATE OF THE  
MUNICIPALITY OF VAGHARSHAPAT

0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA. Tel. +374 (231) 53663 - 112

№ 84

« \_\_\_ » \_\_\_\_\_ 2021թ.

*Արմավիրի մարզի  
Վաղարշապատի  
քաղաքապետի  
Ս. Խաչատրյան*

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ ՏԻԿԻՆ Դ. ՊԱՊԱՐՅԱՆԻՆ

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Հայտնում եմ Ձեզ, որ եղանակային նպաստավոր պայմաններից ելնելով, էջմիածին քաղաքում բարեկարգման և կանաչապատման աշխատանքները ժամանակին և պատշաճ կազմակերպելու համար, խնդրում եմ Ձեր թույլտվությունը 4 բանվոր ընդունելու համար:

ՏՐՈՒՆ: *[Signature]* Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27**

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-  
ՆԵՐՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ 2022Թ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ, «ԵՂԻՇԵ  
ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ՈՒՄ 2022Թ. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ  
ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ ընդունված կարգով, նպատակ ունենալով նյութապես աջակցելու գոհված, վիրավոր ազատամարտիկների և սոցիալապես անապահով ընտանիքներին և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության ՀՈԱԿ մանկապարտեզներում երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություն սահմանել՝

1) Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ գոհված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաների և երկկողմանի ծնողագուրկ երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների գծով սահմանել 100% արտոնություն:

2) Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաների, սոցիալապես անապահով ընտանիքների և միակողմանի ծնողագուրկ երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների գծով սահմանել 71,43% արտոնություն ( $7000-5000(71,43\%)=2000(28,6\%)$ ) վճարման ենթակա գումար:

3) Նույն ընտանիքից միևնույն ժամանակ մանկապարտեզ այցելող 3-րդ ու 4-րդ երեխաների համար 50% արտոնություն:

4) Նույն ընտանիքից միևնույն ժամանակ մանկապարտեզ այցելող 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխաների համար 100% արտոնություն:

2. «Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում գանձվող վարձավճարների գծով արտոնություն սահմանել՝



1) Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաների և երկկողմանի ծնողագուրկ երեխաների համար գանձվող վարձավճարների գծով սահմանել 100% արտոնություն:

2) Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաների, սոցիալապես անապահով ընտանիքների, միակողմանի ծնողագուրկ երեխաների և նույն ընտանիքից միննույն ժամանակ գեղարվեստի դպրոց այցելող 3-րդ ու 4-րդ երեխաների համար ուսման վարձերի գծով սահմանել 50% արտոնություն:

3) Նույն ընտանիքից միննույն ժամանակ գեղարվեստի դպրոց այցելող 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխաների համար 100% արտոնություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Չեռևակահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Չեռևակահ
1.	Դիանա Գասպարյան		_____	_____	13.	Հրաչյա Ավետիսյան		_____	_____
2.	Արսեն Պետրոսյան		_____	_____	14.	Աննա Կիրակոսյան		_____	_____
3.	Էդվարդ Ափոյան		_____	_____	15.	Սևակ Խաչատրյան		_____	_____
4.	Նաիրա Բասենցյան		_____	_____	16.	Վահրամ Ղարիբջանյան		_____	_____
5.	Արամայիս Միրզոյան		_____	_____	17.	Կարեն Գևորգյան		_____	_____
6.	Գևորգ Ղազարյան		_____	_____	18.	Հմմա Պատուրյան		_____	_____
7.	Անդրանիկ Կարապետյան		_____	_____	19.	Էդգար Թամազյան		_____	_____
8.	Ներսես Մելիքյան		_____	_____	20.	Արմեն Դավթյան		_____	_____
9.	Վարդան Գրիգորյան		_____	_____	21.	Քրիստինե Հակոբյան		_____	_____
10.	Կարեն Մովսիսյան		_____	_____	22.	Ռուբիկ Ենոքյան		_____	_____
11.	Գոհար Նիկողոսյան		_____	_____	23.	Կարինե Միրայելյան		_____	_____
12.	Վահան Հախվերդյան		_____	_____					

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 28**

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ  
2022Թ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ ընդունված կարգով, նպատակ ունենալով մեղմացնել ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ուսման համար գանձվող վարձավճարի չափը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում ուսման վարձերի գծով սահմանել հետևյալ արտոնությունները.

1) Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների ուսման վարձերի գծով սահմանել 100% արտոնություն:

2) Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաների, սոցիալապես անապահով ընտանիքների, միակողմանի ծնողազուրկ երեխաների և նույն ընտանիքից մինևնույն ժամանակ երաժշտական դպրոց այցելող 3-րդ ու 4-րդ երեխաների համար ուսման վարձերի գծով սահմանել 50% արտոնություն:

3) Նույն ընտանիքից մինևնույն ժամանակ երաժշտական դպրոց այցելող 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխաների համար 100% արտոնություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2/2 Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Չեռնպահ	2/2 Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Չեռնպահ
1. Դիանա Գասպարյան		_____	_____	13. Հրաչյա Ավետիսյան		_____	_____
2. Արսեն Պետրոսյան		_____	_____	14. Աննա Կիրակոսյան		_____	_____
3. Էդվարդ Ափոյան		_____	_____	15. Սևակ Խաչատրյան		_____	_____
4. Նաիրա Բասենցյան		_____	_____	16. Վահրամ Ղարիբջանյան		_____	_____
5. Արամայիս Միրզոյան		_____	_____	17. Կարեն Գևորգյան		_____	_____

6. Գեորգ Ղազարյան \_\_\_\_\_  
7. Անդրանիկ Կարապետյան \_\_\_\_\_  
8. Ներսես Մելիքյան \_\_\_\_\_  
9. Վարդան Գրիգորյան \_\_\_\_\_  
10. Կարեն Մովսիսյան \_\_\_\_\_  
11. Գոհար Նիկողոսյան \_\_\_\_\_  
12. Վահան Հախվերդյան \_\_\_\_\_

18. Հմմա Պատուրյան \_\_\_\_\_  
19. Էդգար Թամազյան \_\_\_\_\_  
20. Արմեն Դավթյան \_\_\_\_\_  
21. Քրիստինե Հակոբյան \_\_\_\_\_  
22. Ռուբիկ Ենոքյան \_\_\_\_\_  
23. Կարինե Միրայելյան \_\_\_\_\_

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29

«18» հունվարի 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՍԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի Ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հաստատել «Վաղարշապատ համայնքի համայնքային պաշտոն զբաղեցնող անձի և համայնքային ծառայողի վարքագծի կանոնագիրը»-ը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված վարքագծի կանոնագրի դրույթները տարածվում են Վաղարշապատ համայնքի ավագանու, Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների, այդ թվում աշխատակազմի համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող հանրային և վարչական ծառայողների, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի, Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող ՀՈԱԿ-ների և բյուջետային հիմնարկների ղեկավարների և աշխատակիցների վրա, այնքանով, որքանով դրանք վերաբերելի են և բխում են վերջիններիս կարգավիճակի առանձնահատկություններից:

3. Ուժը կորցրած ճանաչել Էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի «Էջմիածին համայնքի համայնքային պաշտոն զբաղեցնող անձի և համայնքային ծառայողի վարքագծի կանոնագիրը հաստատելու մասին» թիվ 66 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

2/2 Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	2/2 Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան		_____	_____	13. Հրայր Ավետիսյան		_____	_____
2. Արսեն Պետրոսյան		_____	_____	14. Աննա Կիրակոսյան		_____	_____
3. Էդվարդ Ափոյան		_____	_____	15. Սևակ Խաչատրյան		_____	_____
4. Նաիրա Բասենցյան		_____	_____	16. Վահրամ Ղարիբջանյան		_____	_____

5. Արամայիս Միրզոյան

*[Signature]*

17. Կարեն Գևորգյան

*[Signature]*

6. Գևորգ Ղազարյան

*[Signature]*

18. Էմմա Պատուրյան

*[Signature]*

7. Անդրանիկ Կարապետյան

*[Signature]*

19. Էդգար Թամազյան

*[Signature]*

8. Ներսես Մելիքյան

*[Signature]*

20. Արմեն Դավթյան

*[Signature]*

9. Վարդան Գրիգորյան

*[Signature]*

21. Քրիստինե Հակոբյան

*[Signature]*

10. Կարեն Մովսիսյան

*[Signature]*

22. Ռուբիկ Ենոքյան

*[Signature]*

11. Գոհար Նիկողոսյան

*[Signature]*

23. Կարինե Միքայելյան

*[Signature]*

12. Վահակ Հախվերդյան

*[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*[Signature]*

Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ

